

Արաբ. Շ.

ՎԱՂԱՐՇԱԿ ՆՈՐԵՆՑ

„ԻՐԻԿՈՒՆ“



№ 3

Հ. Պ. Գ. „ՆՈՅՆՄԲԵՐ“ ՄԻՈՒԹՅԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ՅԵՐԵՎԱՆ — 1926

891.99

25190.

U-93 Բարևույ, Վ.

„Իրրկուն“:

2524.

28/xi 58

9/xii

495
06155

ՎԱՂԱՐՇԱԿ ՆՈՐԵՆՑ

891.99
Ն - 93


ՍՏՈՒԳՎԱԾ Է 1967

„ԻՐԻԿՈՒՆ“

(Կենցաղապոետ)

1001
~~2889~~

1312
841 +2
25790
A 28899



№ 3 ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ Հ. Պ. Գ. „ՆՈՅԵՄԲԵՐ“ ՄԻՈՒԹՅԱՆ № 3

ՅԵՐԵՎԱՆ — 1926 թ.

Գրանդար № 313 ք.

Տիրած 1000.

Տպարան ՀԵՐՄԵՍ Հրատարակչության, Յերևան, Մարտի փող. 29.

Նվիրում եմ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԼԵՆԻՆՅԱՆ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ

ՅԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆԸ

Հին կենցաղը խարխուղին յեվ նորը կառուցողին

Վ. ՆՈՐԵՆՑ

„ԻՐԻԿՈՒՆ“

1648

Ն Ա Խ Ե Ր Գ

Վերջին շենքը մեր գեղեցիկ,
փոքրիկ քաղքի ծայրաթաղի՝
այն հին շենքն է, յեկեղեցին,
վորպես պահակ հին կենցաղի:
Վորպես փառքի ավարտ պսակ
թեև գմբեթն էլ չի ցուում
շեկ ցերեկվա արևի տակ
կամ իրիկվա վոսկե ծովում.
Իր թևերը գոհ ու միատիք
էլ չի փռում խաչը նրա,
վոր քաղաքը հանդիստ նստի,
ինքն որհնուլթյուն թափե վրան:
Նա գլխիվայր ընկել է ցած,
փշրված է փառքն իր հիմա.
Կարմիր աստղն է վերև յելած՝
հին խաչի տեղ մի նոր իմաստ:
Ել չի հնչում կերկեր ու դող
ժամերգություն ու պատարագ.
Այոներական յերգն է հաղթող,
յերգը ռիթմիկ, հատու, արագ:
Յեկեղեցին ակումբ է նոր
ողակներին այոներական.
յեկեղեցին նոր չե բեմով,
մի նոր կյանքի բեմ է սակայն:
Ու կարմրաթև աստղի ներքո,

բայց շենքի մեջ յեկեղեցու,
նոր սերունդը մի նոր հիմքով
իր կենցաղն է նոր կառուցում:
Ու պիտ մի որ հինը փլվի,
հիմքը յելնե արևի տակ.
Նոր կենցաղը պիտի փռվի
ել ամենուր տիրի, խայտա:
Բայց դեռ վերջում մեր գեղեցիկ,
փոքրիկ քաղքի ծայրաթաղի՝
այն հին շենքն է, յեկեղեցին՝
խառնուրդ հին ու նոր կենցաղի:

1. Ի Ր Ի Կ Ո Ւ Ն

1.

Յերեկո. շեկ մայրամուտ.
հորիզոն՝ լիճ վոսկեջուր.
արևը շիկնած, վարանոտ
լողանում է վոսկե լճում:
Սուղվում է կամաց սահուն
արևը վոսկեշեկ ծովում.
միայն վարսերն են լուսահյուս
ջրերի վրա ծածանվում:
Սուղվում է լեռնածոցում,
խեղդվում է արևն հրակ
այն վոսկելիճ հալոցում.
վոչ վոք չի ոգնում նրան:
Արևի մահից հետո
կապտում է այն ծովը շեկ.

փութում ե հետզհետե
մի կապույտ, մուգ կապույտ գիշեր:

2.

Ծառուղի. անց ու դարձ ե,
խառնվել են մարդիկ իրար,
ուզում են գնալ, կարծես,
արևին փրկելու համար:
Բայց ուշ ե. խեղդվել ե նա,
կյանք նրան չեն հասցնի.
բայց գիտեն, վոր նա գնաց,
վաղը նոր արև կը ծնի:
Յերբեմն ել մարումը լավ ե,
վոր վաղը նոր որով գա,
բերի լավեր ու լավեր,
բերի որեր ապագա...
Աստղերն են արդեն զուգել
հորիզոնն արևակուլ...
Հանդարտ հոսում են զույգեր
անտառից մինչև ակումբ:

3.

Ակումբի բակը մութ ե,
զույգեր են գալիս, գնում.
ակումբում յերեկույթ ե,
ակումբում «կարմիր կնունք»:
Հին յեկեղեցին լիքն ե,
լեցվել ե բերնե բերան.
հորդ ե, հաղթ ե գալիքը...
հին տեղը նեղ ե նրան:
Բայց հո ձեռներ չենք ծալի,
վոր նորը ինքնիրեն գա.

այսոր այս ե ցնծալին,
մինչև բերենք ապագան,
Բերել ե պոռներ-բյուրոն
հավաքել մի տաս մանուկ,
հատուկ հրավերով, հյուրով
կաղմակերպել ե «Կնունք»:

4.

Թնդում ե հպարտ-շառաչուն
յերգը «Ինտերնացիոնալ»...
Վերջացավ յերգն ել վերջին,
գալիք սերնդին ձոնած:
Ակումբից դուրս են թափվում
մայրերը՝ ժպիտ, հույզեր.
մայրերը տուն են շտապում
գրկած մանուկներ լուսե:
Մանկիկներ, չիմացաք՝ այս եր
դեռ ծեսի մի լուրջ հանաք.
բայց վաղը հպարտ պիտ ասեք՝
«Ձի կնիել մեզ քահանան»:
Իսկ մենք պիտ ջանանք ելի,
վոր ես հին յեկեղեցում
չկրկնենք հին, ատելի,
սին ծեսի և վնչ մի ցույց:

5.

Գիշեր ե. լուսթյուն չորս կողմ.
դատարկ ակումբը փակած,
հերթապահները չորսով
անցնում են բակով կամաց:
— Սը՛ս, շշունջ, փրսփսուկ.
— «Նստի՛ր, նստ նստի՛ր. կըծկի՛ր...»

Իրիկուն, դու իջեւ ես
այս հին գմբեթի վրա.
հերսում մոմերը շիջել են,
հողաքի ե անկրակ:
Վորպեսզի այս շենքը հին
իր հողաքը չհրկարե
ու հողաքի ժամին
չունենա տենչ սլաքարի, —
մենք խրել ենք արդեն
սրտիդ մեջ դառնակակիծ
աստղը սուշրասյր, հնգաթև
հենց ես գմբեթի գլխից:



— Ո՞վ եք, ո՞վ, չե՞ք լսում.
 լուցկի, լուցկի, լուցկի...
 — Կնոց, կնոց, ե՛յ կնոց. փախա՞մ.
 — Փախա՞մ. ո՞ւր պիտ փախչի.
 — Մեկը փախա՞մ. — վո՞ր կողմ, տղա.
 — Մեկն ահա, կիսամերկ... աղջիկ...
 — Ա՛խ դու. ո՞ւմ հետ ես դու...
 Յե՛վա, Յե՛վա, Յե՛վա...
 Լուսթյուն. քար լուսթյուն.
 փղձկում, հեկեկանք, հեալ:

2. Յ Ե Վ Ա Ն

1.

Ել անցավ բերնե բերան
 իրիկվա այդ դեպքը չար.
 «ասեղը դառավ գերան»
 անկյուններում քչփչան:
 Գնում են բակն ակումբի
 հաճախ խմբեր մարդկային.
 — «Ահա կողքը այս թումբի,
 յետևն այս շիրմաքարի...»
 Ու մեկ մեկ ասվում է այն,
 կարծես թե իրենք տեսան.
 ո՞, քաղաք գավառական՝
 բուժ ու փուտ ստերի հեսան:
 Հոհոց, ծիծաղ, հանաք,
 նոր մի նյութ դատարկ վեճի
 ու լեզենդներ բամբառակ...
 Լուրը գնաց բջիջին:

2.

Եւս նոր եր մտել կոմսոմոլ,
 նրան նոր աշխարհ եր սա.
 անփորձ եր դեռ, անսովոր,
 նոր սասանհինգ զարուն տեսած:
 Դեռ չբնանն հարազատ այս նոր
 վոչ իր նորությամբ, վոչ ել
 սասանուհինգ տարին անցնող
 չեն սովել նրան վոչինչ:
 Եւս կակուզ, կակուզ խմոր՝
 նոր եր այդ չբնանն ընկել
 և վորից կենցաղը նոր
 պիտ կերտեր մի պայծառ ընկեր:
 Բայց հինը զարան մտած
 զազում և ամեն նորի.
 Քեկ նա փլվում և փտած,
 բայց ուզում և սպրի նորից:

3.

Տարիներն անցած, սովեր,
 վորպես ջրախառ գինի,
 նրան սրբունք, հափբանք ելին սովել,
 ուզում եր... ինչ վոր բան լինի:
 Շիկնում եր հանախ, ինչու.
 ինչ-վոր անծանոթ մի բան
 սահում եր մարմնի միջով
 մի անսովոր քաղցրությամբ:
 Ա. հանախ մտորում եր,
 տխուր եր կարծես Յեզան,
 հանախ իր մտորումն եր
 շար լինել, ջարդել մի բան:

Մի որ մտակցով նրան
 անտանուս ստար մի գեմք.
 — «Բարե՛ ձեզ, որիորդ Յեզա,
 մենք, գիտե՞ք, հին ծանոթ ենք...»
 Շիկնեցավ, վոչինչ չեր հիշում.
 չիմացավ լմբո՞ւ էր, թե՛ հեզնեց,
 ու Յեզան, կարծես մշուշում,
 նրան իր ձեռք մեկնեց.
 Մի փոքրիկ գրույց, վոչինչ էլ.
 պինդ սեղմեց ձեռքն Յեզայի.
 — «Զեք ուզում ինձ հետ իջնել»,
 ասաց նա ժպտով սիրալիր.
 — Վոչ. ասաց Յեզան, ու նա իջավ.
 — Նորեկն ընկեր էր, հին ծանոթ էր սա.
 ուզում էր բարկությամբ հշտի՛
 թե ինչու «որիորդ» ասաց...

Այնուհետ էլ թնչ անել,
 Յեզան ուր ուզեր գնալ,
 համբի վրա նրան էր
 հանդիպում անակնկալ.
 Հաճախ անտանուս նստած
 տեսնում էր՝ մտակցով կամաց,
 ժպտաց, բարեկեց վստահ...
 Ինքն էլ ժպտում էր սկամա:
 Անցել էր շարաթ. (ամառանոց, ամառ)
 բայց այդքան բավ էր մեկին,
 վոր Յեզան, յերբ տուն գառնար,
 «ուզեկից» ունենար մեկին:

Մի շարաթ միայն, և ահա,
«ակումբում կարմիր կնունք»,—
կարդում են նա ու Յեվան,
իրիկունն ակումբ գնում:

3. Բ Ձ Ի Ձ Ո Ի Մ

1.

Բջիջի դռնփակ նիստը
բաց հայտարարեց կարոն,
թեև արտաքուստ հանգիստ եր,
բայց այրվում եր ներքին պայքարով:
Ընկերները լուրջ ու խոհուն
սպասում էին ակնդետ,
ծանրությամբ էին խորհում,
ո՞վ կելնե հակառակ, ընդդեմ:
Ամեն մեկը վորոճում եր
միայն մի միտք հրատապ,
ինքն իրեն վորոշում եր,
թե ինչ վճիռ պիտի տա:
Ու ահա սեղանի վրա
կարոն եղ հարցը հանեց,
բացվեց վարագույրը մուսյլ,
սկսվեց խոսք, բանավեճ:

2.

— «Հեռացնել, նրա վարքը
ամենքիս վարկաբեկեց»,
— Այդքան է միայն մեր վարկը
(ու խոսքն ուրիշ կողմ թեքեց),—
չի՞ ընկնի մեր վարկը, յեթե

մենք հանենք խակ վորոշում
ու մեր ընկերը նետենք
փողոցի ցեխում, փռում,
— «Ի՞նչ ուներ Յեվան, ի՞նչ գործ,
ո՞ւմ հետ. ի՞նչ աստիճան, մինչ այն...
Հիմա ել թող գնա գլխիկոր,
ուր յերթա այն տղան մեշչան»:
— Վոր պոռնիկ դառնա անողորմ
փողոցի նեխված ճահճում,
այդպե՞ս ե մեր կենցաղը նոր
հին կենցաղի դեմ մաշտնչում:

3.

— Ընկերներ, ասաց կարո՞ն,
մի ընկեր զոհե՞նք հնին,
կոմսոմոլը պայքարող՝
նախապաշարմունք չունի.
հին սովորույթը հոտած
մեր դեմ պետք ե նվաղի:
— «Գավառը դեռ շատ ե ոտար
քո ասած նոր կենցաղին»:
— Մի անփորձ ընկեր հնից
խարված ե, պե՞տք ե միթե
հեռացնենք մեր շարքերից
մատի շարժումով թեթե:
— Թողեք թող խոսի ինքն ել,
առաջարկ. իսկ ո՞վ ե դեմ.
— Լռություն, լռություն, ընկեր,
Յեվա, խոսքը քեզ ե, դե՞...

Նա ուզեց բարձրանալ տեղից,
 ուզում էր լինել վստահ,
 բայց շուրջը թվաց նեղլիկ,
 նա ճնշված մնաց նստած:
 Առաջին ամոթի նման
 գլուխը կախ էր, մռայլ.
 «առաջին մեղքն» իր ծանրությամբ
 ծռում էր վիզը նրա...
 Ուզեց ինչ վոր բան ասել
 ու կարծես ասեց մի բան.
 ո՞վ լսեց. վոչ վոք չլսեց,
 ու վոչինչ չասեց Յեվան:
 Ու... դառավ կրկին մեղսախույզ
 սուր հայացքների հեսան.
 նա, վոր ծաղիկ էր ծիծաղուն,
 նոր տասնհինգ զարուն տեսած:

— «Վիճելու ել նյութ չկա».
 մի քանիսն ասեցին վռազ, —
 ու բաղդը մատաղ աղջկա
 բարձրացավ մատների վրա:
 Ձեռնպահ վոչ վոք չեղավ.
 դուրս հանել. կամ խիստ բողոք:
 Ո՛, ի՞նչ էր այս վճիռը խակ. —
 աղջկան նետել փողոց:
 — «Ինչո՞ւ անպայման փողոց.
 ո՞ւր է այն տղան հարուտ,
 թող գնան, հեզնեց, փողով
 ստեղծեն կարգին ապրուստ...»

մի մահի՞ճ կլինենք առաջարկ,
յերկու ոտար ամուսին՝
կապված դիպվածով մի շար:
Ու շանցած յերկու ամիս,
դեռ «դիպվածը» չմարսած,
բեմ յելներ այս անգամին
վերջնական... ապահարզան:
Թե՞ այլ յելք, լուծում ուրիշ
պիտի այս գործն ստանար.
հերոսը մի յերկու տարի
նստեր ու... հանգստանար:

3.

Բայց հերոսը արկածի,
հենց դեպքի հաջորդ յերեկոն,
իր տանը հանգիստ պառկած եր՝
գոհ տարած հաղթանակով:
Դարձել եր քաղաք, վոր ջանա
ապրելակերպն եր յերկարել.
վոր կյանքը տիղմով լճանար,
ճնշված կողերով քարե:
Կարծում եր կենցաղը նոր
մի ամի ջուր ե ճահճի յերեսին,
խկ ինքը ընկած ե խոր
ու վոչինչ իրեն չի հասնի:

4.

Յերբեմն ել նա... վիճում եր,
կյանքի դեմ բարկ գաղաղած.
— «Հա՛, նորը, նորն ել ինչո՞ւմն ե,
յերբ չկա սերը ազատ»:
Ինչո՞ւ, ինչո՞ւ պիտի նա

ելի անկարելի գնով,
հնի պես ճգնի տիրանալ
ամեն մի դյուլթիչ կնոջ:
Ինչո՞ւ չսիրի ազատ
հենց սիրած հանդիպողին,
իսկ յերբ վոր մարմնին հասավ,
վաղն ելի նոր անկողին...
Ու նա պնդում եր թե՛
«Այդ ե կենցաղը գալիք որվա,
ինչո՞ւ այսոր այս խորթ ե».
Քնչում եր նա վրդովված:

5.

Նա այդ եր պնդում, այն ինչ,
— վորպես անտառում խոնավ,
փթած տերևների միջից՝
ծծած հյուլթեր ու հնար,
ծլում ե զվարթ ծիլ առ ծիլ
ծառերի սերունդ մի նոր. —
բացվում ե կենցաղը նորածին
պարուրված փտած հնով:
Բայց որվա արևը շեկ
ժպտում ե ծիլերի աճին,
վոր վաղը ընձյուղներ քշեն
ու փարթամ, շքեղ կանաչեն...
Տերևներն մզլած ու գեջ
մեկ ել լուռ, տխրաթախիծ
կտեսնեն՝ վեր փռված անվերջ
նոր անտառ սաղարթախիտ:

5. Կ Ա Ր Ո Ն

1.

Բջիջի դռնփակ նիստն ել
փակ հայտարարեց Կարոն,
վոր արտաքուստ հանգիստ եր,
բայց այրվում եր ներքին պայքարով:
Ուզում եր մնալ նստած
ու մենակ լինել մի բոպե.
վոր սիրտը գաղտնի չփնգստար,
վոր ազատ ու լայն տրոփեր...
Յերբ դուրս եր յեկնում ալամա
միջանցքից դեպի լայն մի բակ,
թվում եր՝ սրտից ամպամած
պիտ պոռթկար ուշացած մի բան:
Ուշացած. բայց ո՞վ առարկեց,
վոր այլևս հասնել չի կարող.
ու սիրտը հատու գարկեց,
ու արագ քայլեց Կարոն:

2.

Իրիկվա վճռից ել հատու
Կարոն վճիռն իր հանեց.
Թեև նույնպես իր սրտում
յեղել եր պայքար, բանավեճ:
Մտքերի մաքուր քամին
քշել եր մշուշը մռայլ,
վոր հնուց մնացած անմիտ
ծանրացել եր մտքի վրա:
Ու ելի զգաց Կարոն,

վոր խոսքը դատարկ է, սին,
վոր պետք է գործի աշայքարով
քայքայել Ֆետիշը հին:

3.

Վաղուց եր. լուսեղեն մի կարթ՝
ցոլումով ճառագայթի
ու... Կարոյի սիրտը կը թարտար
կախված լուսեղեն կարթից:
Վաղուց եր Յեվան նիզակել
Կարոյի սիրտը անզրահ,
բայց Կարոն չեր խիզախել
սիրո խոսք ասել նրան:
Գտել եր, վոր դեռ շուտ է,
թող նորով ամրանա Յեվան.
ու նա կամքով քշում եր
հույզերի հոսանքը հեան:
Իսկ հիմա որն եր հերթի,
վոր Կարոն ամեն ինչ բանա
ու մեշչան հնի կոկորդին
դնի մի բացված դանակ:

4.

Գալիքի շող-շող ունգերով
պայծառ եր դեմքը Կարոյի.
աչքերում ինչ վոր բան կար գերող՝
հմայքը վաղվա կարոտի:
Զգում եր կրկին Կարոն՝
հանձնված քաղցր անուրջին՝
վոր չկա վոչինչ խանգարող,
վոր իրենց սերը չի կորչի:

Թող շուրջը լինի փսփսուկ
և կամ բաց ճակատ պայքարի,
կկորչի փսփսուկը քսու,
կհաղթե իր կամքը արի:
Ու տեսնում եր պայծառ կարոն
իր առաջ փռված ճամբեն,
ու տանում եր առաջ պայքարող
իր վճիռն հատու, անբեկ:

5.

Չգում եր կարոն, կանխապես
հավատով, համոզմամբ լեցուն,
հարցը վոր գավկում տարվեց՝
կստանա ուրիշ լուծում:
Են ո՞վ եր վոր ճիշտ ասաց՝
չի վճռում շարժումը մատի.
Կյանքն ունի վճիռ անսասան...
Գավկումը չի հաստատի...
Յեվ այդ համոզման հենած
հանեց վճիռներ և այլ
ու հանգիստ քայլերով, մենակ
նա գնաց դեպի Յեվան:

Վ Ե Ր Ջ Ե Ր Գ

1.

Վերջին շենքը մեր գեղեցիկ,
փոքրիկ քաղքի ծայրաթաղի
այն հին շենքն է, յեկեղեցին՝
մոայլ պահակն հին կենցաղի:

Յեկեղեցին ակումբ ե նոր
ողակներին պոններական,
յեկեղեցին նոր չե բեմով,
մի նոր կյանքի բեմ ե սակայն:
Հին ժամտունը և նոր ակումբ
խառնվել են իրար հիմա,
պայքարում են մի նորագույն
և մի հինցած, գիջուկ իմաստ:
Գիտենք՝ հինը պիտի փլվի,
հիմքը յելնի արևի տակ.
Նոր կենցաղը պիտի փռվի
ել ամենուր տիրի, խայտա...

2.

Ե՛յ, կոմսոմոլ, հնի խլուրդ,
հիմքը խարխուղ հին կենցաղի,
մի տես հինը վճնց ե խլում
քո շարքերից ծիլ ու ծաղիկ:
Յերբ դու մի նոր մանուկ խլած
«կնքում ես» և ուրախանում,
են հին կենցաղը խարխլած
վրեժը նույն որն ե հանում:
Յեկեղեցին ակումբ արած
մինչ յե՛րբ փորես հիմքը այդ տան,
մենակ ի՞նչ են կարոն-Արան,
հանդգնությամբ անհատական:
Ե՛յ, կոմսոմոլ, կամքդ վառած՝
այրիբ, սրբիբ ամեն տականք,
թող վոր ուժերդ ամբարած
վառվեն, պայթեն վորպես ական:

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



220028899

A $\frac{11}{28899}$

Հ. Պ. Գ. „ՆՈՅԵՄԲԵՐ“ ՄԻՈՒԹՅՈՒՆ

ԼՈՒՅՍ ՏԵՍԱՆ՝

- № 1. Մ. ԱՐՄԵՆ. Կոմսոմոլիա
- № 2. Գ. ՄԱՀԱՐԻ. Յերկու պոևոմ
- № 3. Վ. ՆՈՐԵՆՑ. Իրիկուն

ՄԵԿ
օրինակ

ԳԻՆԸ Ե 25 կոպեկ